



“ՓՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԺԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1887

ԹԻՒ 1


Ն Ա Ջ Ա Ր Է Ք

Շնորհաւոր Ծնունդ կը մտղթենք մեր բոլոր ընթերցողաց մեծին և պըզտիկին : Պարտիմք շնորհակալ ըլլալ մեր կենաց իւրաքանչիւր օրերուն մէջ որ Յիսուս, Աստուծոյ յախտենական Որդին, ծնաւ կուսէ մը և եկաւ աշխարհ ըլլալ մեզ իշխան և փրկիչ, Բայց յարմար և վայելուչ է որ ասանք մասնաւոր օր մը յիշատակելու այն օրհնեալ դէպքը, և կը բաղձանք որ համայն Գրիստոնեայք կարող ըլլային միաբանիլ միեւնոյն օրուան վրայ, այնպէս որ ամէնքն ալ ուրախանային և շնորհակալութիւն մատուցանէին ի միասին :

Այս տարուան իբր Ծննդեան պատկեր կը դնենք Տղայոց Աւետարների այս առաջին թուոյն մէջ այժմու Նազարէթի տեսարանը : Չը կրնար ըլլալ տարակոյս թէ այս գիւղը որ հիմա կը կոչուի Էն Նազիրա, է նոյնն ուր Յիսուս անցուց իւր երկրաւոր կենաց մեծագոյն մասը : Յիշեալ գիւղը բոլոր իւր կարևորութիւնը կը ստանայ Յիսուսի հետ կապակցութիւն ունենալէն : Նազարէթի անունը չյիշուի որովհետեւ Հին կտակարանին մէջ, և բաց ի Յիսուսէ ուրիշ երևելի անձ բնակած չէ հոն :

Նազարէթ էր այն տեղը ուր Գաբրիէլ հրեշտակ աւետեց կուսին Մարիամու թէ որդի մը պիտի ծնաներ : Հոն Յովսէփ և Մարիամ բնակեցան իրենց Եգիպտոսէ դառնալէն ետքը : Այս գիւղին ծայրը կայ աղբիւր մը որ կը կոչուի “Աղբիւր կուսին,” ուր Մարիամ անտարակոյս շուր բերելու կ'երթար շատ անգամ Յիսուս մանուկին հետ : Նազարէթի ետեւ եղող

բլուրներէն միոյն դադաթէն շատ աղւոր կ'երեւին բնութեան տեսարանները : Անկէ կը տեսնուին Լիբանան լեռանց շղթան, Հերմոնի ձիւնալից կատարը, Թափոր և Կարմեղոս լեռները, նաև կը տեսնուի առջևը այն պտղաբեր գաջառը որոյ մէջէն կը հոսի Գիշոն, և ուր կ'երեւին Կանա, Նային, Ենգովը, և ուրիշ գիւղեր : Կը տեսնուի նաև Աքեա քաղաքը որ առաջ



ՆԱՋԱՐԷՔ

կ'անուանէր Պտողէմայիս, և անկէ անդին Միջերկրական ծովուն կապոյս շուրերը : Անտարակոյս պատանին Յիսուս շատ անգամ կ'ելէր բլրին յիշեալ գադաթը վայելել այն տեսարանին գեղեցկութիւնը և հաղորդակցիլ իւր Հօր հետ :

Բայց Գրիստոսի ներկայութիւնն հոն, Նազարէթի բնակչաց քիչ օգուտ բրաւ : Անոնք դուրս հանեցին զԳրիստոս ժողովարանէն, և հիմա կը տեսնուի այն բարձր կատարը լեռին որմէ ուղեցին վար դահաւիժել զնա : Նազարէթի բնակիչք այնպէս անհաստ էին որ Յիսուս քիչ հրաշք գործեց հոն և ստիպուեցաւ Կափառնայում երթալ բնակիլ : Աւելի աղէկ է որ Գրիստոս

բնակի մեր սիրտերուն՝ քան թէ մեր քաղաքին կամ գիւղին մէջ : Եւ Գրիստոսի մեր սրտերուն մէջ բնակելովը մենք ամէնքս կրնանք վայելել Անոր ներկայութիւնը :

ԵՐԿՐՈՐԻ ՊԱՏՈՒԻՄԱՆԸ

“Գուն քեզի կուռք չչինես, ոչ ալ վերը երկնից մէջ” կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակը շուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը անոնց երկրպագութիւն չընես ու զանոնք չպաշտես : Ինչու որ ես քու Տէր Աստուածդ նախանձոս Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոյք վրայ՝ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս և կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն :”

Յակոր Կիրակի օր մը կէս օրէն ետքը նետեց իւր դիւքը և ըսաւ, “Ի՞նչ հարկ խօսել օտար աստուածներու երկրպագութիւն ընելու վրայ, իբր թէ ըլլայինք հեթանոսներ :”

“Ես ալ այդպէս կը խորհիմ,” ըսաւ քոյրը Եսթեր, “ես չեմ կարծեր որ մեզի վերաբերութիւն ունի այդ : Մեր վարժուհին ըսաւ, ‘Աղջիկներ, ահա ձեզի ժամանակ մինչև յառաջիկայ Կիրակի օր, գտեք թէ ինչ է երկրորդ պատուիրանին միտքը :’ Ես կ'ուզէի որ ինք ըսէր թէ ինչ կը նշանակէ այն. միթէ կա՞ն իրօք ուրիշ աստուածներ որոց երկրպագութիւն կ'ընենք այսօր : Ո՛հ, ես կը կարծեմ թէ անհեթեթ բան է տալ մեզ որ սորվինք այս պատուիրանները, իբր թէ անոնց մէջ բան մը կենար մեզի հա-

մար : ճշմարիտը խօսելով, ես բաւական մեծցած եմ և երթալու չեմ կիրակնօրեայ դպրոց :

« Իս այ, » ըսաւ Յակոբ :

« Գիտէ՞ք, Շուշան Սթրոնկ պիտի ամուսնանայ գալ շարժու : » ըսաւ անոնց հօրաքոյրը, սենեկին միւս անկիւնէն :

« Ի՞նչ կ'ըսես, հօրաքոյր, մ'ի ըսաւ քեզի : »

« Իս անոր քոյրը տեսայ այսօր կէս օրէն ետքը : Կ'ըսէ թէ հրաւերները տակաւին չեն արուած, բայց ամէնքդ ալ պիտի հրաւիրուիք : »

Կ'ըսեմ քեզ, Պէլ, » ըսաւ Յակոբ, « թէ դուն այն ատեն պիտի հաղնիս վարդագոյն շրջազետող զոր կը փափաքէիր հագնել այսչափ Ժամանակէ հետէ : »

« Այո, ես կ'ուզեմ հագնել զայն : Ես աղւոր պիտի չերևի : Ես շատ կը սիրեմ վարդագոյն մետաքս շրջազետող : Ես ամէն բան կու տամ զայն հագնելու առիթ մը ունենալու համար : Կը յուսամ թէ պիտի չհրաւիրուին Սթիվեանք : »

« Ինչո՞ւ համար : Պիլ Սթիվ ազնիւ անձ է : Անտարակոյս շատ բան չգիտեր, բայց բաւական ստակ ունի, և կ'ըսեմ թէ պարծանք է անոր հետ գտնուիլ : »

« Բայց Յակոբ, Պիլ անկիրթ և բթամիտ է : Գուն հող պիտի չընէիր անոր համար եթէ չունենար ստակ : Շիտակդ ըսէ, հող կ'ընէիր : »

« Ձեմ կարծեր թէ պիտի ընէի, բայց որովհետեւ ստակ ունի, կը սիրեմ զնա : »

« Ես ցուցնեմ քեզի, Յակոբ, ճշմարտապէս սիրելի և բարի վարքով տղայ մը, — այն է Արթուր Պէյլթ : »

« Բէ՛հ, անպիտան մէկն է այն, շատ աղքատ է, և տասը փարա անգամ չծախսեր իւր ընկերներուն համար : Ես ըսեմ քեզի, ես աւելի կ'ուզեմ ստակ ունենալ քան որեւիցէ ուրիշ բան : Մարդ կրնայ ըլլալ երևելի, եթէ ունենայ ստակ : Երանի՛ թէ ես ունենայի : »

« Տղաք, ինձի կ'երևի թէ դուք երկուքդ ալ կը կտարէք երկրորդ պատուիրանը, » ըսաւ անոնց հօրաքոյրը : « Եթէ հասկցածս շիտակ է, այն պատուիրանին միտքն է այս, թէ մենք պարտինք պաշտել ճշմարտութեան և ուղղութեան Աստուածը, և չկանգնել ուրիշ աստուածներ և երկրպագութիւն չընել անոնց : Արդ, կէս Ժամէ հետէ եղած այս խօսակցութեան մէջ, լսեցի որ յիշուեցան երկու կուռքեր զորոնք դուք կանգնած էք և երկրպագութիւն կ'ընէք անոնց, ըսել կ'ուզեմ հանդերձը և ստակը : »

« Ա՛հ, հօրաքոյր, ես բնաւ չխտրհեցայ ատոր վրայ : »

« Եւ ոչ ես, » ըսաւ Յակոբ : « Ուստի, ինչ և ըլլայ, այսօր ալ կայ ուրիշ աստուածներու երկրպագութիւն ընել, » և տղաքը երկուքն ալ նստան խորհելու այս բանին վրայ :



ՔՐԵԱՅԻ ԹԱԳԱՌՈՐԸ

ՔՐԵԱՅԻ ԹԱԳԱՌՈՐԸ

Եթէ կոտտանդուպուրէ ճամբայ ելելով երթայինք ուղղակի արևելք Ասիոյ ցամաքէն, 5,000 մղոն ճամբորդելէ ետքը պիտի հասնէինք Ասիոյ արևելեան ծայրը, ուր է Քորէայի պարանոցին հիւսիսային մասը : Քորէայի 12,000,000 բնակչոց վրայ իշխող Թագաւորին պատկերն է զոր կը զնենք հոս : Նա է 32 տարեկան և շատ աղէկ կը կառավարէ երկիրը : Նման իւր դրացիներուն, Սիամի Թագաւորին և ճա-

բանի կայսեր, հետամուտ է հաղորդել իւր հպատակաց արդի քաղաքակրթութեան օրհնութիւնները :

Քորէա առաջ կը կոչուէր « ճգնաւոր երկիր », մասն զի բնակիչք չէին հաղորդակցեր օտարականաց հետ : Բայց հիսն ոչ ևս է այնպէս : Այժմ Քորէայիք կ'ընդունին ուրիշ կառավարութեանց դեպքանները : Թագաւորը բաւական թուով Ամերիկացիներ բերել տուած է Քորէա որ Անգղիերէն լեզուն և արդի գիտութիւններ սոր-

վեցունեն ժողովրդեան : Հոն կան չուած է նաև Ամերիկացի դատաւոր մը իբրև խորհրդական թագաւորին քաղաքական իրաց մէջ : Այս վերջին քայլն առնուելուն յորդորոյն եղաւ լի Հունկ Չանկ, Չինացի մեծադոյն գիւանագէտը :

Քորէայի թագաւորը տարեկան հարկ մը կը հատուցանէ Չինաստանի կայսեր, բայց բացարձակ կը տիրէ իւր երկրին, և ունի իշխանութիւն կենաց և մահու համայն իւր հպատակաց վրայ : Կը կարծուի թէ Ռուսիա աչք տնկած է Բորէայի, վասն զի մի միայն նաւահանգիստը զոր ունի Ռուսիա խազաղական Ուկրանոսին վրայ, կը սառի տարւոյն բաւական մեծ մէկ մասին մէջ, և կ'ուզէ ձեռք բերել Քորէայի նաւահանգիստներէն մէկ քանին : Անգղիա գրաւած է նաւահանգիստ մը Քորէայի ծովեզեւրաց մօտ խումբ մը կղզեաց մէջ, և ձարոն կ'ուզէ ջնջել Չինու առնչութիւնը Քորէայի հետ և ինքն անցնիլ անոր տեղը իբրև գերիշխան պետութիւն : Երիտասարդ թագաւորը գիտէ թէ ինչպէս վտանգներով շրջապատեալ է, և պէտք ունի ի գործ դնել իւր բոլոր իմաստութիւնը պահպանելու համար իւր թագաւորութեան անկախութիւնը :

մինը : Սա ապրեցաւ ասկէ 1200 տարի առաջ, և կը համարուէր Անգղիացի սրբոց ամենէն մեծը : Կը նկատուէր իբրև պաշտպան սուրբը վանքին : և Սրբոյն Բուծպէրթի դրօշին ներքև Անգղիացիք յաղթեցին Սկովտիացւոյ մեծ ճակատամարտի մը մէջ մօտ ի Տըրհամ 1346 ին :

Ի Տըրհամ կը գտնուի նաև հին ամբողջ կառուցեալ Գուլիէլմոս Ա. խարհակալէն ժԱ. դարուն, և որ հիմա է նոյն քաղաքին մէջ 1833 ին հաստատուած համալսարանին մէկ մասը :


Ահա այս է նամակին թարգմանութիւնը :

«Մերեւ Յե... Ես շատ աղօթք ըրի քեզի, բայց կարծեմ շատ հեռի ըլլալուդ համար կարող չեղար ըսել, վասնորոյ ահա կը գրեմ քեզի նամակ մը : Մենք անցեալ ամառ անցանք մեծ ուկրանոսէն : Մայրիկս հիւանդ է երկար ժամանակէ ի վեր : Կրնամ դեղ մը դրկել անոր որ բժշկուի : Եւ, սիրելի Յիսուս, հաճէ զրկել հայրիկիս դործերու գործ մը, որ կարող ըլլայ գնել մեղի տաքուկ հանդերձներ և ուտելու բան մը : Հաճէ շուտով ընել, վասն զի կը մահնք և անօթի ենք :

«Մարդ մը չգիտեր թէ ես այս նամակը կը գրեմ : Եւ խորհեցայ թէ կարելի է անակնկալ օգնութիւն մը պիտի դրկես մեզի, այնպէս որ հօրս և մորս զարմանքը չարժէ :

«Յ. Գ. Չեուրներս այնպէս մաած են որ չեմ կրնար գրել շատ աղէկ :

Օրիորդ քարտուղարին այուրները արցունքով լեցուեցան երբ նամակին վերջին խօսքերը կը կարդար : Նստաւ ժամանակ մը նամակը իւր ձեռքը և երբ ծալլեց գայն, միտքը դրաւ բան մը ընել փոքրիկ տղան երջանիկ ընելու համար : Բաւ ինքնիրեն. «Ինչ ալ ըլլան անոր ծնողքը, այս սիրուն տղին հաւատքը պէտք չէ որ պարսպ ելլէ :» Այն իրիկուն ճաշէն ետքը, բանը պատմեց իւր քանի մը ընկերներուն, և անոնք փա-



ՏԵՐՀԱՄԻ ՄԱՅՐ ԵՎԵՂԵՅԻՆ

ՏԵՐՀԱՄԻ ՄԱՅՐ ԵՎԵՂԵՅԻՆ

Անգղիոյ հիւսիսային կողմը գտնուող

Տըրհամ անուն փոքրիկ քաղաքը ունի աշխարհիս չքեղագոյն մայր եկեղեցեաց մին : Այս եկեղեցին ժամանակաւոր էր վանք, և անոր մէկ մասը շինուեցաւ կանուխ, 1093 ին : Երբ բոլոր կաթողիկ վանքերը յարքունիս գրաւուեցան Հենրիկոս Բ. ի թագաւորութեան տակնը, Տըրհամ եղաւ եպիսկոպոսական թեմի մը կեդրոնը, և վանքը փոխուեցաւ մայր եկեղեցւոյ : Եղաւ ամենէն հարուստ թեմն Անգղիոյ, և 1831 ին այս եպիսկոպոսը կ'ընդունէր տարեկան թոշակ առաւել քան 19,000 Անգղիական ոսկի : Աւելի վերջերը եպիսկոպոսին թոշակն իջաւ 8,000 ոսկւոյ, և անկէ աւելցածը աղքատ եպիսկոպոսաց թոշակին վրայ դրուեցաւ :

Յիշեալ եկեղեցւոյ մէկ մասին մէջ կը հանգչի Սրբոյն Բուծպէրթի մար-

ՓՈՔՐԻԿ ՀԱՆՍԻ ՀԱՍՍԻՔԸ

Հետագայ սրտաշարժ պատմութիւնը որ հրատարակուած է Անգղիերէն հանդէսի մը մէջ նամակի մը վրայով է զոր Գերմանացի գրագիր դեռահաս օրիորդ մը գտաւ Ռուշինկոզնի նամակատունը մնացած թղթոց մէջ :

Օրիորդը մինչ կը խառնէր թուղթերու մեծ գէղ մը, ձեռքն անցաւ տարօրինակ փոքր նամակ մը, որուն վրայ Գերմաներէն գրուած էր սա հասցէն, «Պա. Յիսուս, յերկինս :» Աճապարանօք պատուեց նամակին պահարանը և գտաւ անոր մէջ աղտոտած թուղթ մը որուն վրայ ամէն կողմ գրուած էր աղաւ մը անպարժ ձեռքով : Բաւերէն ունանք կը թուէր թէ բաւարուած էին արցունքով, և օրիորդը դժուարաւ կը կարդար զանոնք :

փարով խօսք տունն օգնել օրիորդին պատրաստել սնտուկ մը :

Սնտուկը պատրաստուեցաւ քանի մը օրէն : Անոր մէջ կար քանի մը ֆանէլաներ մօրը և փոքրիկ Հանսին համար, լաւ հանդերձներ հօրը համար, և խաղալիկներ՝ անոր հաւատացունելու համար թէ չնհնդեան պարզէնէնը Գերմանիոյ միայն յատուկ չէին : Ամենուն վրայ գրուած էր տասն թաւթնոց թվթադրամ մը : Սնտուկը ճամբայ հանուածին պէս, օրիորդը նամակ մը գրեց Հանսի, որուն մէջ կը սէր թէ իւր նամակն ընդունուած էր, և թէ Յիսուս երկրի վրայ գտնուող իւր ծառաներէն մին զրկած էր օգնել Հանսի, և թէ աղաւ սնտուկ մը ճամբայ հանուած էր որ պիտի հասնէր անոնց ձեռքը :

Շատ շանցաւ, ջերմ շնորհակալու-

